Ձևաչափ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ - 2024

ԲԱԶԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

(տվյալները ներկայացնել 01 հունիս 2024թ. դրությամբ)

Կազմակերպության անվանում	ՀՀԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
Ծրագրի վերնագիր	«Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» և «Հայ դասականների երկերի գիտական հրատարակություն»
2024 թ. պայմանագրով նախատեսված ֆինանսավորման չափ	187888156
Աշխատակիցների քանակ Վարչական, տեխնիկական, սպասարկող /գիտական	57
Ստորաբաժանումների քանակ	7

Լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատակիցներ (շաբաթական 40 ժամ)

	Պաշտոնի անվանում	Քանակ
1.	Ստորաբաժանման ղեկավար	5
2.	Խմբի ղեկավար	1
3.	Գլխավոր գիտաշխատող	
4.	Առաջատար գիտաշխատող	6
5.	Ավագ գիտաշխատող	8
6.	Գիտաշխատող	10
7.	Կրտսեր գիտաշխատող	9
8.	Ավագ լաբորանտ	2
9.	Լաբորանտ	
10	Ավագ Ճարտարագետ	
11.	Ճարտարագետ	

Հրատարակած գիտական աշխատանքներ

Հոդված ՄԳԾ-ում - 3

1. **Bejanyan K., Karagyozian G.,** Armenian trace of a european legend, Steps», T. 10. №2. 2024, p. 284-296, https://doi.org/10.22394/2412-9410-2024-10-2-284-295 The journal is indexed in CNKI, ERIH PLUS, Scopus, Russian Science Citation Index, Elibrary.ru, Ulrich's Periodicals Directory, Cyberleninka, (scopus Q2). (ԱԳ ունեցող)
2. **Gasparyan Luiza, Hayryan Zaruhi,** Sayat-Nova's Oeuvre in the Light of Interpretation and Translation by V. Bryusov, Studia Litterarum, 2024 vol 9, N 1, pp. 168-185. Научный филологический журнал, Институт мировой литературы имени А. М. Горького, Российская Академия Наук, Scopus Q1. (ԱԳ ունեցող)
3. **Ованесян Сусанна,** Достоевский в литературной жизни Армении // Неизвестный Достоевский. 2024. Т. 11. № 1. С. 184–205. DOI: 10.15393/j10.art.2024.6921 (ԱԳ ունեցող)

Հոդված ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում – **19**
Հոդված գիտաժողովի նյութերի ժողովածուում – **7**

Գիտաժողովներ, այցելություններ, գիտական միջոցառումներ

Դասախոսություն – **3**
Գիտական միջոցառում – **1**
Գիտաժողովների մասնակցություն - **11**

Ձեռքբերված սարքեր/սարքավորումներ, գույք

	Անվանում	Քանակ	Արժեք
1.	-	-	-
2.	-	-	-
3.	-	-	-
4.	-	-	-
5.	-	-	-

Ծրագրի ընթացքն՝ ըստ օրացուցային պլանի (առավելագույնը 2 էջ)

Բազային ֆինանսավորման 24INSTLIT-CON-I-6B ծածկագրով «Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» և «Հայ դասականների երկերի գիտական

հրատարակություն» ծրագրի (ղեկավար՝ Հերիքնազ Որսկանյան) շրջանակում իրականացվում է հայ գրականության պատմության համալիր ուսումնասիրություն՝ տեսական ընդհանրացումներով, որը ներառում է գրականության պատմության պարբերացման հարցերը, ժանրային համակարգը, գրական ուղղությունները, դպրոցները, ցույց է տրվում գրականության պատմության զարգացման ընթացքը: Հրատարակության են պատրաստվում հայ դասականներ Ե. Չարենցի, Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Ն. Աղբալյանի երկերի գիտական ժողովածուները՝ ճշգրտված բնագրերը տեքստերով, բնագրային տարբերություններով, տարբերակներով և գիտական ծանոթագրություններով:

Ծրագրի նպատակներից և խնդիրներից ելնելով՝ կազմվել է աշխատանքի կատարման օրացուցային պլան՝ հստակ ժամկետներով: Նախատեսված բոլոր աշխատանքները կատարվել են:

Մարտ, մայիս ամիսներին պլանավորված երկու գրքերը պատրաստ են տպագրության.

1. Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ (500 էջ),
2. Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու 13 հատորով, հտ. 2-րդ (450 էջ):

Տպարանում է

«Խաչատուր Աբովյանի կյանքի և գործունեության տարեգրություն, հատոր առաջին, 1809-1833» գիրքը, 946 էջ (874 էջ+ 72 էջ ներդիր) (ըստ պլանի՝ նոյեմբեր):

Ամբողջացման փուլում են հետևյալ գիտական աշխատությունները.

1. Եղիա Տեմիրճիպաշյան. կյանքը և ստեղծագործությունը (հունիս)
2. Армянская поэзия в рецепции русских поэтов конца XX, начало XXI века (հուլիս)
3. Նիկոլ Աղբալյան, Պատմություն հայոց գրականության: Երկերի ամբողջական ժողովածու 7 հատորով: Հատոր առաջին (օգոստոս):

Բազային ծրագրի շրջանակում պլանավորվել է տարվա ընթացքում հրատարակել 16 հոդված ՄԳՇ-ում և մեկ մենագրություն գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index)

հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունում:

Տպագրության են պատրաստվել 2 մենագրություն.

1. Վ.Տերյան, Հովհ. Թումայնան և Նվարդ. վավերագրեր և վերլուծություններ (208 էջ):

2. "THE POET AND THE ORPHANS IN THE CONTEXT OF GENOCIDE" (անգլերեն), (250 էջ):

Հաշվետվությունների համաձայն՝ 01 հունիս 2024թ-ի դրությամբ

ՄԳՇ-ում տպագրության համար ընդունված հոդվածներ – 9

ՄԳՇ-ում տպագրության համար ուղարկված հոդվածներ – 18

ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում ընդունված հոդվածներ – 18

Աշխատանքներն իրականացվել են գրականագիտության արդի մեթոդների կիրառությամբ՝ պայմանավորված ուսումնասիրվող նյութերի բնույթով՝ գրականության պատմություն, տեսական հետազոտություններ և բնագրագիտական աշխատանքներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ – 2024

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

(տվյալները ներկայացնել 01 հունիս 2024թ դրությամբ)

Ծածկագիր	22YR-6B039	
Կազմակերպություն	ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ	
Նախագծի Վերնագիր	Լևոն Շանթի պատմական դրամաները և 19-րդ դարի 70-90-ական թվականների եվրոպական դրամատուրգիան	
Ֆինանսավորման սկիզբ	01.10.2022	

Խմբի անդամներ (նշել խմբի բոլոր անդամներին, այդ թվում փոփոխված)

	Ազգանուն անուն հայրանուն	Պաշտոն (ղեկավար, կատարող, երիտասարդ)	Ամսեկան աշխատավարձի չափ ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	Կատարողի նախագծում ընդգրկված ժամանակահատված (սկիզբ – ավարտ)
1.	Սարգսյան Նառա Ղարիբի	ղեկավար	160.0	01.10.2022-30.09.2024
2.	Միրզոյան Արթուր Սահակի	կատարող	140.0	01.10.2022-30.09.2024
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				
9.				

Նախագծի շրջանակներում հրատարակած գիտական աշխատանքներ

Նախագծի շրջանակներում գիտաժողովներ և այցելություններ

«Երիտասարդ գրականագետների հանրապետական գիտաժողով», (Երևան, 2023, նոյեմբերի 15, 16)

Ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)

		Պայմանագրով նախատեսված/փոխանցված	Փաստացի ծախսված	Մնացորդ
1.	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները	7200.0 / 5700.0	5700.0	0.0
2.	Այլ ծախսեր, այդ թվում՝	1827.0	327.0	1500.0
2.1	*սարքեր, նյութեր և ծառայություններ*	327.0	327.0	0.0
2.2	*գործուղումներ*	1500.0		1500.0
2.3	*վերադիր ծախսեր*			
Ընդամենը		9027.0 /7527.0	6027.0	1500.0

Մնացորդի վերաբերյալ մեկնաբանություն՝ ըստ տողերի

Խմբի կատարողի՝ Արթուր Միրզոյանի առողջական խնդրի պատճառով չի կատարվել գործուղում արևմտաեվրոպական երկիր՝ Ավստրիա՝ Զալցբուրգ՝ թեմայի վերաբերյալ լրացուցիչ ուսումնասիրություն կատարելու: Գործուղումը տեղափոխվել է այս տարի: 2024 թ. հունվարին դիմել, գրանցվել ենք Գերմանիայի դեսպանատուն: Առ այսօր սպասում ենք պատասխանի, հարցազրույցի կանչման:

Նախագծի շրջանակներում ձեռքբերված սարքեր/սարքավորումներ, գույք, գործուղում
(Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է պահանջել ծախսերի հաշիվ ապրանքագրերը)

	Անվանում	Քանակ	Ընդհանուր արժեք
1.	ՆՈԹԲՈՒՔ ACER Aspire 3 A315-59G-50G5 (i5-1235U) 15.6'' 8GB 512GB MX550-2GB	1	327.0

	(SILVER) (NX.K6WER.003)		
2.			
3.			
4.			
5.			

Նախագծի ընթացքն՝ ըստ օրացուցային պլանի (առավելագույնը 2 էջ)

«Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2022» մրցույթ

2022-2024 թվականներ, 1-7 եռամսյակներ

Ըստ օրացուցային պլանի

Առաջին եռամսյակ (2022 թ. հոկտեմբեր- դեկտեմբեր)
«19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ դրամատուրգիան»

Այս եռամսյակում ընթերցվել և ուսումնասիրվել է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ դրամատուրգիայի զարգացման ընթացքը՝ Մուրացանի, Շիրվանզադեի, Գ. Սունդուկյանի, Վ. Փափազյանի, Ս. Թառայանի, Ս. Մալխասյանի, Ա. Աբելյանի, Մ. Մանվելյանի և ուրիշների դրամատիկական երկերը, քննվել են դրանց թեմատիկ, գաղափարական և ժանրային առանձնահատկությունները: Այնուհետև ուսումնասիրվել են Լ. Շանթի առաջին շրջանի դրամատիկական երկերը, դրանց մասին եղած գիտական հետազոտությունները, տեսական գրականությունը:

Կատարվել են քննարկումներ, այցելություն գրադարաններ: Ստեղծվել է ֆեյսբուքյան էջ՝ «Լեւոն Շանթ» խորագրով, որի միջոցով հանրայնացվել են Լ. Շանթի հոդվածները, բանաստեղծությունները, դրամաները, նկարները և այլն:

Երկրորդ եռամսյակ (2023 թ. հունվար-մարտ)
«Անցում պատմական դրամատուրգիային»

Երկրորդ եռամսյակում կատարվել է Լ. Շանթի՝ պատմական թեմատիկայով դրամաների ուսումնասիրություն՝ ըստ ժամանակագրության, ընթերցվել են բնագրերը («Կայսր», «Շղթայվածը», «Ինկած բերդի իշխանուհին», «Օշին Պայլ», և այլն), հավաքագրվել տվյալները, գիտական հետազոտությունները: Այս շրջանում հանդիպել ենք ոլորտի մասնագետների՝ ի մասնավորի գրականագետ Սերժ Սրապիոնյանի հետ:

Երրորդ եռամսյակ (2023 թ. ապրիլ-հունիս)
«Հավաքած մետատվյալների ուսումնասիրության ավարտ»:

Կատարվել է հավաքագրված նյութերի գաղափարական և մեթոդական դասակարգում: Պատրաստվել է 1 հոդված, որը ուղարկվել է տպագրության : Այժմ պատրաստման ընթացքի մեջ է երկրորդ հոդվածը: Տպագրությունից հետո հավելյալ կծանուցենք ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին:

Չորրորդ եռամսյակ (2023 թ. հուլիս-սեպտեմբեր)
«19-րդ դարի հասարակական-քաղաքական իրադարձությունների արտացոլումը եվրոպական դրամատուրգիայում»:
Ուսումնասիրվել և բնագրից թարգմանվել են 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի եվրոպական դրամատուրգիայի և գրական տարբեր ուղղությունների մասին եղած տեսական գրականությունը (Հ.Իբսեն, Ա. Ստրինդբերգ., Մ. Մետերլինկ, Զ. Ֆրոյդ, Տուրիշևա Օ. Ն., **Ханс-Хеиберг, Аверенцев С., Волькенштейн В., Выготский Л., Зингерман Б., Шкунаева И., Юнг К., Адмони В. Г. և այլք**):

Հավաքագրվել և ի մի են բերվել նյութերը: Խումբը պարբերաբար կատարել է հանդիպումներ և քննարկումներ: Համակարգվել են ուսումնասիրված ողջ նյութերը:

Խմբի կատարողի՝ Արթուր Միրզոյանի առողջական խնդրի պատճառով չի կատարվել գործուղում արևմտաեվրոպական երկիր՝ թեմայի վերաբերյալ լրացուցիչ ուսումնասիրություն կատարելու:

Մեկ տարվա ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ ազգային գրադարանում, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարաններում գտնվող տարբեր նյութեր, աղբյուրներ, բնագրեր, ինչպես նաև էլեկտրոնային ռեսուրսներ, մասնավորապես 19-րդ դարի երկրորդ կեսի գրականությանն առնչվող բազմաթիվ գրքեր, թերթեր, հանդեսներ նյութեր:

Հինգերորդ եռամսյակ (2023 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր)
«Եվրոպական դրամատուրգիայի ուսումնասիրություն»
Այս եռամսյակում կատարվել են եվրոպական դրամատուրգիայի բնագրերի ցանկի կազմում՝ ըստ ժամանակագրության, ընթերցանություն, ուսումնասիրություն, քննարկումներ: Խմբի կատարող Արթուր Միրզոյանը «Երիտասարդ գրականագետների հանրապետական գիտաժողով»-ում (Երևան, 2023, նոյեմբերի 15, 16) հանդես է եկել **«Շանթի «Կայսր» դրաման 19-րդ դարի 70-90-ական թվականների եվրոպական դրամատուրգիայի համատեքստում»** (համահեղինակ, խմբի ղեկավար՝ Նառա Սարգսյան) հոդվածով:

Վեցերորդ եռամսյակ (2024 թ. հունվար-մարտ)
«Լևոն Շանթը և եվրոպական դրամատուրգիան»
Այս եռամսյակում կատարվել է եվրոպական խորհրդապաշտական դրամատուրգիայի ազդեցության և Շանթի՝ պատմական թեմատիկայով դրամաների համեմատական քննություն:

Հունվար ամսվա ընթացքում Արևմտյան Եվրոպա ուղևորվելու համար դիմել ենք Գերմանիայի դեսպանատուն:

Յոթերորդ եռամսյակ (2024 թ. ապրիլ-հունիս)
«Պատմափիլիսոփայություն»:
Կատարվել է պատմական դրամաների մասին եղած տեսական գրականության, գիտական ուսումնասիրությունների հավաքագրում: Եղել են քննարկումներ գրականագետների՝ շանթագետ Վ. Գրիգորյանի հետ: Հանրային ռադիոյում պատրաստել ենք երկու հաղորդում մեր

ուսումնասիրության թեմայի շրջանակում, որոնք եթեր կհեռարձակվեն հունիսի կեսերին: Պատրաստվել է մեկ հոդված, որ ուղարկվել է տպագրության: Եվս երկու հոդված պատրաստման ընթացքի մեջ են:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության անվանում	«ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ
Մշտադիտարկված դրամաշնորհների ծածկագրեր	Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում (24INSTLIT-CON-I-6B). «Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» և «Հայ դասականների երկերի գիտական հրատարակություն», Պայմանագրային (թեմատիկ) հետազոտություն (22YR-6B039). «Լևոն Շանթի պատմական դրամաները և 19-րդ դարի 70-90-ական թվականների եվրոպական դրամատուրգիան»
Մշտադիտարկման իրականացման օօ/աա/տտտտ	18.09.2024

Ներածական

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հիմնադրվել է 1943 թ.: Այն հայ գրականության վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող ՀՀ առաջատար հետազոտական կենտրոնն է: Ունի 57 աշխատակից, 7 ստորաբաժանում: Ինստիտուտում գործում է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդ: Ինստիտուտը հրատարակում է «Գրականագիտական հանդես» պարբերականը:

Գիտական արդյունք. Կազմակերպության կողմից հետազոտական հրապարակումների քանակը և որակը, ներառյալ ամսագրերը, գիտաժողովների նյութերը, գրքերը, արտոնագրերը, տեխնոլոգիայի բարելավումներ: Սա կարող է ներառել միջազգային հղումների քանակը, ամսագրերի ազդեցության գործակիցը և այլն:

Մոնիտորինգային այցի ժամանակ ինստիտուտը ներկայացրել է 2024 թ. հատարակված 3 ՄԳՇ հոդված, 19 ԲԿԳԿ ցանկում ներառված ամսագրերում հրատարակված հոդված, գիտաժողովների ժողովածուներով հրատարակված 7 հոդված: Կազմակերպվել է 1 գիտական միջոցառում, 3 դասախոսություն, 11 գիտաժողովի մասնակցություն:
Տեղեկացվել է, որ ինստիտուտի աշխատակիցների 9 հոդված հրատարակության է ընդունված ՄԳՇ-ում գրանցված ամսագրերի կողմից, 18 հոդված՝ ԲԿԳԿ ցանկում ներառված ամսագրերի կողմից: 18 հոդված էլ ուղարկվել է ՄԳՇ-ում գրանցված ամսագրերի: Տպագրության է պատրաստ 8 գիրք:
22YR-6B039 ծածկագրով «Լևոն Շանթի պատմական դրամաները և 19-րդ դարի 70-90-ական թվականների եվրոպական դրամատուրգիան» պայմանագրային (թեմատիկ) հետազոտական ծրագրի շրջանակում մոնիտորինգի պահին հրատարակված գիտական աշխատանքներ չկային (տեղեկացվել է, որ մեկ հոդված ուղարկվել է ՄԳՇ-ում գրանցված ամսագրի), խմբի անդամները մասնակցել էին մեկ տեղական գիտաժողովի (2023 թ.):

Ֆինանսավորման աղբյուրներ. պետական դրամաշնորհներից, այլ կազմակերպություններից և բարեգործական աղբյուրներից **Կազմակերպության** ֆինանսավորում ապահովելու կարողությունը:

Ինստիտուտի ֆինանսավորման հիմնական աղբյուրը ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի բազային ծրագիրն է: Փոքր քանակ են կազմում ԲԿԳԿ-ի պայմանագրային (թեմատիկ) հետազոտական ծրագրերը: Ինստիտուտը արտերկրի դրամաշնորհներ չունի:

Համագործակցություններ. այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ծավալն ու որակը:

Ինստիտուտը համագործակցում է տեղական և միջազգային կազմակերպությունների հետ: Առավել սերտ համագործակցություն է առկա մի շարք անվանի գրողների (Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի) թանգարանների հետ: Այդ համագործակցության շրջանակներում հրատարակվել են կամ հրատարակման ընթացքում են գտնվում Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի երկերի նոր լիակատար ժողովածուները: Վերջին տարիներին ինստիտուտը սերտացրել է ՌԴ ԳԱ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հետ համագործակցությունը, երկու կազմակերպությունները համատեղ գիտաժողովներ են կազմակերպել և հրապարակումներ են ունեցել Մոսկվայում և Երևանում:

Կրթություն, ուսուցում, գիտելիքի փոխանցում և տարածում. գիտնականների և հետազոտողների երիտասարդների կրթման և վերապատրաստման ուղղությամբ աշխատանքներ (սեմինարներ, պրակտիկաներ և մենթորության հնարավորություններ): Հետազոտության արդյունքները տարածելու ավելի լայն լսարաններին, ներառյալ հանրությանը, քաղաքականություն մշակողներին և ոլորտի շահագրգիռ կողմերին: Սա կարող է ներառել հանրային դասախոսություններ, լրատվամիջոցների ներգրավվածություն, իրազեկման ծրագրեր և գիտական հաղորդակցման նախաձեռնություններ:

Ինչպես ՀՀ ԳԱԱ համակարգի այլ հումանիտար գիտահետազոտական ինստիտուտների դեպքում, Գրականության ինստիտուտում ևս երիտասարդ գիտաշխատողները (մինչև 35 տարեկան) փոքր թիվ են կազմում: Մեկ երիտասարդ աշխատակից մասնագիտական վերապատրաստում է անցել Ավստրիայում:
Ինստիտուտի կողմից լիարժեքորեն չեն օգտագործվում գրականագիտական հետազոտությունների արդյունքները հանրայնացնելու ուղղությամբ առկա հնարավորությունները (այդ թվում՝ նորոգույն տեխնոլոգիաների ընձեռած):

Ենթակառուցվածք և ռեսուրսներ. հետազոտական օբյեկտների, սարքավորումների և օժանդակ ծառայությունների առկայությունը և որակը, որոնք տրամադրվում են **Կազմակերպության** կողմից իր հետազոտողներին:

Ինստիտուտի աշխատակիցները լիարժեք ապահովված չեն համակարգչային տեխնիկայով: Առկա տեխնիկայի մի մասն էլ հնացած է: Խնդիրներից մեկն էլ այն է, որ ինստիտուտում առկա չէ կենտրոնացված ջեռուցման համակարգ, ինչից կարող են տուժել գրադարանում պահվող արժեքավոր գրքերը:

Եզրակացություն

Եղած ռեսուրսներով՝ Գրականության ինստիտուտի աշխատակիցները նկատելի աշխատանքներ են կատարել հայ և համաշխարհային գրականության վերաբերյալ գիտական հետազոտություններ կատարելու, հայ գրողների անտիպ ստեղծագործություններ, լիակատար ժողովածուներ հրատարակելու ու հանրայնացնելու նպատակով: Առավել խնդրահարույց են ինստիտուտի միջազգային կապերի, անձնակազմի երիտասարդացման, ՄԳՇ շտեմարաններում հոդվածների տպագրության վերաբերող հարցերը:

Առաջարկություններ

ա. Անհրաժեշտ է սերտացնել հումանիտար հետազոտություններով (այդ թվում՝ գրականագիտությամբ) զբաղվող եվրոպական համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների հետ համագործակցությունը:
բ. Անհրաժեշտ է առավել սերտացնել ԵՊՀ և ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետների հետ համագործակցությունը, ռազմավարություն և գործողությունների ճանապարհային քարտեզ մշակել ինստիտուտի աշխատակազմը երիտասարդ խոստումնալի աշխատակիցներով համալրելու նպատակով:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության անվանում	ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
Մշտադիտարկված դրամաշնորհների ծածկագրեր	Ա. Բազային 24INSTLIT-CON-I-6B Բ. 22YR-6B039 Գ. 21T-6B118 Դ. 21T-6B141
Մշտադիտարկման իրականացման օօ/աա/տտտտ	18/09/2024

Ներածական

Այցելությունը տևեց 2.5 ժամ. շրջեցինք բոլոր բաժիններով, հանդիպեցինք դրամաշնորհային ծրագրերի ղեկավարների հետ, ծանոթացանք ընթացիկ աշխատանքներին, այցելեցինք գիտաժողովների սրահ, որտեղ մատնանշվեցին այն սարքերը, որոնք ձեռք են բերվել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի դրամաշնորհներով: Հատուկ ուշադրություն դարձվեց երիտասարդ գիտաշխատողների ներգրավման հարցին, գրահրատարակչությանն ու ՄԳՇ ներառված ամսագրերում հոդվածների տպագրություններին:

Գիտական արդյունք. **Կազմակերպության** կողմից հետազոտական հրապարակումների քանակը և որակը, ներառյալ ամսագրերը, գիտաժողովների նյութերը, գրքերը, արտոնագրերը, տեխնոլոգիայի բարելավումներ: Սա կարող է ներառել միջազգային հղումների քանակը, ամսագրերի ազդեցության գործակիցը և այլն:

Գիտնականներից տպագրվում են ՄԳՇ-ի ամսագրերում, իրականացնում դրամաշնորհային ծրագրերով նախատեսված հետազոտությունները, կազմակերպում ու մասնակցում գիտաժողովների ու աշխատաժողովների: Գիտական արդյունքն ու արդյունավետությունը առկա է, սակայն հայ գրականության ուսումնասիրությունների առանձնահատկությունը հայերենով տպագրվելն է, ուստի նշվեց անգլերենի և/կամ այլ լեզուներով հայ գրողների երկերի թարգմանությունների համար միջոցների ու մասնագետների ներգրավման կարևորությունը:

Ֆինանսավորման աղբյուրներ. պետական դրամաշնորհներից, այլ կազմակերպություններից և բարեգործական աղբյուրներից **Կազմակերպության** ֆինանսավորում ապահովելու կարողությունը:

Ա. Բազային 24INSTLIT-CON-I-6B «Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» և «Հայ դասականների երկերի գիտական հրատարակություն»
Բ. 22YR-6B039 «Լևոն Շանթի
պատմական դրամաները և 19-րդ դարի 70-90-ական թվականների եվրոպական դրամատուրգիան»

Գ. 21T-6B118 «Կանանց հիմնախնդիրները 19-
րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության մեջ»
Դ. 21T-6B141 «Երազը և տեսիլքը հայ գրականության մեջ և մշակույթում»

ԿԳՄՍՆ նախարարության տարբեր դրամաշնորհներով տպագրվել և տպագրվում են արևելահայ և արևմտահայ դասականների հատորներ

Սփյուռքահայ բարերարների ներդրումների միջոցով տպագրվում են այլ անտիպ գործեր, մասնավորապես շեշտվեց Խաչատուր Աբովյանի 2024 թ. տպագրված ստվար երկերը:

Համագործակցություններ. այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ծավալն ու որակը:

Դրամաշնորհային ծրագրերի ղեկավարները հոգացել են իրենց ծրագրերով նախատեսված միջազգային համագործակցությունների ու ներկայացվածության ուղղությամբ, օրինակ՝ Զալցբուրգի համալսարանի հետ, նշվեց մասնակցություն գիտաժողովների Ֆրանսիայում, Գերմանիայում, արաբական երկրներում, և այլուր:
Առկա է ակտիվ համագործակցություն ՀՀ Գրականության և արվեստի թանգարանի ու նրա մասնաճյուղերի, գրողների անունը կրող թանգարանների ու տուն-թանգարանների, Ազգային արխիվի հետ՝ հայ գրողների ստեղծագործությունների ընտրանիներն ու լիակատար հատորները տպագրելու ուղղությամբ:

Կրթություն, ուսուցում, գիտելիքի փոխանցում և տարածում. գիտնականների և հետազոտողների երիտասարդների կրթման և վերապատրաստման ուղղությամբ աշխատանքներ (սեմինարներ, պրակտիկաներ և մենթորության հնարավորություններ): Հետազոտության արդյունքները տարածելու ավելի լայն լսարաններին, ներառյալ հանրությանը, քաղաքականություն մշակողներին և ոլորտի շահագրգիռ կողմերին: Սա կարող է ներառել հանրային դասախոսություններ, լրատվամիջոցների ներգրավվածություն, իրազեկման ծրագրեր և գիտական հաղորդակցման նախաձեռնություններ:

Ինստիտուտը Հայ բանասիրության և Արտասահմանյան գրականության ուղղությամբ մասնագիտացող ՀՀ ԲՈՒՀ-երի ամենաառաջնային գիտական հարթակն է, ենթաբաժանումները տրամաբանված ու պատճառաբանված են: Հետևաբար, կապը կրթական հաստատությունների, ուսանողների հետ առկա է, այդ թվում՝ ինստիտուտի մասնագետների՝ ԲՈՒՀ-երում դասավանդելու շնորհիվ, թեմաների ղեկավարմամբ, երիտասարդ կադրերի ներգրավմամբ: Երիտասարդների, ուսանողների հանդիպեցինք մոնիթորինգի օրվա ընթացքում:
Ինստիտուտի մի շարք աշխատողներ ունեն ակտիվ հանրայնացման փորձառություն, նկարահանվում են հաղորդումներում ու փոդքասթներում, տպագրվում գրական թերթերում, մասնակցում գրական միջոցառումների, հանրաճանաչություն ունեն, սակայն ոչ ինստիտուտի շրջանակներում:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ. հետազոտական օբյեկտների, սարքավորումների և օժանդակ ծառայությունների առկայությունը և որակը, որոնք տրամադրվում են **Կազմակերպության** կողմից իր հետազոտողներին:

Գիտաժողովների սրահում մատնանշվեցին այն սարքերը, որոնք ձեռք են բերվել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի դրամաշնորհներով, դրանք ծառայում են պրեզենտացիաներ, տեսանյութեր ցուցադրելու համար:

Եզրակացություն

Ինստիտուտը տպավորիչ աշխատանք է կատարում: Գիտնականները տպագրվում են ՄԳՇ ամսագրերում, իրականացնում դրամաշնորհային ծրագրերով նախատեսված հետազոտությունները: Սակայն միանշանակ կա ընդհանուր ինստիտուտի ուղղությունների, հետազոտությունների, տպագրված բնագրերի ու գործերի միջազգայնացման ուղղությամբ աշխատանքի կարիք: Կարծում ենք անհրաժեշտություն կա ինստիտուտի կողմից արդեն իսկ հրատարակված աշխատանքները թարգմանելու ուղղությամբ նոր մասնագետների ներգրավվածության:

Առաջարկություններ

Ա. Գիտելիքի տարածման ժամանակակից գործիքների տիրապետման հարցում կարծում ենք աջակցություն է անհրաժեշտ ինստիտուտին: Կարծում ենք միջոցների բացակայության պատճառով՝ ինստիտուտի կայքը ստեղծվել է wordpress-ի շաբլոններից մեկով՝ ոչ մասնագիտական ներգրավվածությամբ, իսկ ֆեսբուքյան էջը mms մասնագետի վարման կարիք ունի, հետևորդների թիվը սակավ է: Կայքի ստեղծման համար լուրջ միջոցների ներգրավում է պետք: Ընդ որում, համեմել էջը նաև վերջին շրջանի գյուտերով ու հայտաբերումներով, տեղադրել ծրագրերի մասին տեղեկատվություն, ներկայացնել գիտնականներին՝ տեսանյութեր պատրաստելով: Փորձը ցույց է տալիս, որ գիտաշխատողները դժկամությամբ են մոտենում անձամբ այդ հարցրեը հոգալուն (ինչը նաև իրենց անմիջական աշխատանքը չէ), նաև սեփական հոգեբանական առանձնահատկությունների, ժամանակի սղության պատճառով: Ուստի պետք է հրավիրել համապատասխան մասնագետի, ով կարճ տեսանյութերով կներկայացնի ու կհետաքրքրի լայն լսարանին: Ճիշտ հանրայնացման արդյունքում նաև ինստիտուտի նորություններն ու միջոցառումներն ավելի հասանելի կլինեն, ներգրավվածությունն ու միջոցառումների մասնակցությունը կընդլայնվի:
Բ. Կարծում ենք գրականագիտությանը, գրաքննադատությանը, գրականագիտության փոխառնչություններին այլ գիտակարգերի հետ: Մեկ մասնավոր օրինակ իմ մասնագիտական տիրույթից. օրինակ՝ կարելի է Հայոց ցեղասպանության արտացոլումը արտասահմանյան գրականության մեջ թեմատիկ միջազգային գիտաժողովի անցկացում նախաձեռնել՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ: Հայ գրականության թեմաները պետք է արտահանվեն միջազգային տիրույթ, այլազգի նոր մասնագետներ ներգրավվեն այդ գծի ուղղությամբ: Թեև նախկինում նման միջոցառումներ անցկացվել են, նաև հոդվածներ են տպագրվել, սակայն գիտաժողովները եղել են հայերենով, նյութերը տպագրվել են հայերենով: Ինչո՞ւ այդ ամենը չանել անգլերենով… Սա ընդամենը մեկ օրինակ է, համագործակցությունն ու միջազգայնացումը վստահաբար կստացվի, հատկապես որ ինստիտուտն ունի Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժին: Նկատեցինք, որ տպագրության է հանձնվել THE POET AND THE ORPHANS IN THE CONTEXT OF GENOCIDE անգլալեզու մենագրությունը: Պատկերացնում ենք, որ գրողների երկերն իսկ

տպագրության պատրաստելը խիստ ժամանակատար, աշխատատար, մանրակրկիտ աշխատանք է, որ արվում է ինտիտուտում, բայց միջազգայնացումը շատ կարևոր է ՀՀ ներկա մարտահրավերների պարագայում:
Գ. Կարծում ենք ամենակարևոր հարցերից մեկը գրողների, գրականագետների արխիվային նյութերի հայտնաբերման ու մեկտեղման հարցն է, և/կամ եղած նյութերի կրկնօրինակների ձեռքբերման հարցը:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկում – 2024

ՏԵՂԵԿԱՆՔ

(Ծրագրի/թեմայի կատարման ընթացքի, ձեռքբերված արդյունքների, պայմանագրով նախատեսված առաջադրանքին, օրացուցային պլանին և ծախսերի նախահաշվին համապատասխանության մասին)

Կազմակերպության անվանում	ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
Ծրագրի/թեմայի ծածկագիր և վերնագիր (ըստ հավելվածների)	
1. (Հավելված 1)	«Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» և «Հայ դասականների երկերի գիտական հրատարակություն» (ծածկագիր՝ 24INSTLIT-CON-I-6B)
2. (Հավելված 2)	«Լևոն Շանթի պատմական դրամաները և 19-րդ դարի 70-90-ական թվականների եվրոպական դրամատուրգիան» (ծածկագիր՝ 22YR-6B039)
Մշտադիտարկման ժամկետը	«30» մայիսի 2024 թ. - «20» սեպտեմբեր 2024թ.
Մշտադիտարկում իրականացնելու հիմքը	ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 03.05.2024 թ. N 141-Ա հրաման

Լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատակիցներ (շաբաթական 40 ժամ)

	Պաշտոնի անվանում	Քանակ
1.	Ստորաբաժանման ղեկավար	5
2.	Խմբի ղեկավար	1
3.	Գլխավոր գիտաշխատող	
4.	Առաջատար գիտաշխատող	6
5.	Ավագ գիտաշխատող	8
6.	Գիտաշխատող	10
7.	Կրտսեր գիտաշխատող	9
8.	Ավագ լաբորանտ	2
9.	Լաբորանտ	
[redacted]		

Հավելված 1

Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում «Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» և «Հայ դասականների երկերի գիտական հրատարակություն», (ծածկագիր՝ 24INSTLIT-CON-I-6B)

<u>Մշտադիտարկումն իրականացրած աշխատանքային խումբ</u> (ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 10.05.2024 թ. N 146-Ա/Ք հրաման)	1.Ղարիբյան Կարեն - Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար 2.Գրիգորյան Արմինե - Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Ծրագրերի իրականացման վարչության Հետազոտական ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ 3.Կարապետյան Լարիսա - Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ 4.Սուքիասյան Համո - ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող 5.Խաչատրյան Շուշան - Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրողների փաստագրման և ուսումնասիրության բաժնի ղեկավար

<u>Մշտադիտարկումն իրականացվել է ըստ հետևյալ փաստաթղթերի/նյութերի.</u>

1. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ 29.01.2024 թ. կնքված N 1-33/24-I/INSTLIT պայմանագիր
2. ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից տրամադրված տեղեկատվություն
3. Այցելություն կազմակերպություն

Հրատարակած գիտական աշխատանքներ (քանակական և որակական)

Հոդված ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում – **19**

Հոդված գիտաժողովի նյութերի ժողովածուում – **7**

Հոդված ՄԳՇ-ում - 3

1. **Bejanyan K., Karagyozian G.,** Armenian trace of a european legend, Steps», T. 10. №2. 2024, p. 284-296, https://doi.org/10.22394/2412-9410-2024-10-2-284-295 The journal is indexed in CNKI, ERIH PLUS, Scopus, Russian Science Citation Index, Elibrary.ru, Ulrich's Periodicals Directory, Cyberleninka, (scopus Q2). (ԱԳ ունեցող)

2. **Gasparyan Luiza, Hayryan Zaruhi,** Sayat-Nova's Oeuvre in the Light of Interpretation and Translation by V. Bryusov, Studia Litterarum, 2024 vol 9, N 1, pp. 168-185. Научный филологический журнал, Институт мировой литературы имени А. М. Горького, Российская Академия Наук, Scopus Q1. (ԱԳ ունեցող)
3. **Ованесян Сусанна,** Достоевский в литературной жизни Армении // Неизвестный Достоевский. 2024. Т. 11. № 1. С. 184–205. DOI: 10.15393/j10.art.2024.6921 (ԱԳ ունեցող)

Մարտ, մայիս ամիսներին պլանավորված երկու գրքերը պատրաստ են տպագրության.

1. Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ (500 էջ),
2. Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու 13 հատորով, հտ. 2-րդ (450 էջ):

Տպարանում է

«Խաչատուր Աբովյանի կյանքի և գործունեության տարեգրություն, հատոր առաջին, 1809-1833» գիրքը, 946 էջ (874 էջ+ 72 էջ ներդիր) (ըստ պլանի՝ նոյեմբեր):

Ամբողջացման փուլում են հետևյալ գիտական աշխատությունները.

1. Եղիա Տեմիրճիպաշյան. կյանքը և ստեղծագործությունը (հունիս)
2. Армянская поэзия в рецепции русских поэтов конца XX, начало XXI века (հուլիս)
3. Նիկոլ Աղբալյան, Պատմություն հայոց գրականության: Երկերի ամբողջական ժողովածու 7 հատորով: Հատոր առաջին (օգոստոս):

Բազային ծրագրի շրջանակում պլանավորվել է տարվա ընթացքում հրատարակել 16 հոդված ՄԳՇ-ում և մեկ մենագրություն գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունում:

Տպագրության են պատրաստվել 2 մենագրություն.

1. Վ.Տերյան, Հովհ. Թումայնան և Նվարդ. վավերագրեր և վերլուծություններ (208 էջ):

2. "THE POET AND THE ORPHANS IN THE CONTEXT OF GENOCIDE" (անգլերեն), (250 էջ):

Հաշվետվությունների համաձայն՝ 01 հունիս 2024թ-ի դրությամբ

ՄԳՇ-ում տպագրության համար ընդունված հոդվածներ – 9

ՄԳՇ-ում տպագրության համար ուղարկված հոդվածներ – 18

ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում ընդունված հոդվածներ – 18

Գիտաժողովներ, այցելություններ, գիտական միջոցառումներ

Դասախոսություն – **3**
Գիտական միջոցառում – **1**
Գիտաժողովների մասնակցություն – **11**

Համագործակցություն (այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն)

Ինստիտուտը համագործակցում է մի շարք կազմակերպությունների հետ: Առավել սերտ համագործակցություն է առկա մի շարք անվանի գրողների (Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի) թանգարանների հետ: Այդ համագործակցության շրջանակներում հրատարակվել են կամ հրատարակման ընթացքում են գտնվում Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի երկերի նոր լիակատար ժողովածուները: Վերջին տարիներին ինստիտուտը սերտացրել է ՌԴ ԳԱ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հետ համագործակցությունը, երկու կազմակերպությունները համատեղ գիտաժողովներ են կազմակերպել և հրապարակումներ են ունեցել Մոսկվայում և Երևանում:

Նյութատեխնիկական բազա (սարքեր/սարքավորումներ, գույք)

Ֆինանսական

Ներկայացված ֆինանսական ծախսերը հաստատող փաստաթղթերը համապատասխանում են նախահաշվին, թերություններ չեն հայտնաբերվել: (Կցվում է ԲԿԳԿ Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետի եզրակացությունը):

Ամփոփում (մշտադիտարկման արդյունքներ) և առաջարկություն

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» և «Հայ դասականների երկերի գիտական հրատարակություն» ծրագրի շրջանակում իրականացվում է հայ գրականության պատմության ուսումնասիրություն՝ տեսական ընդհանրացումներով, որը ներառում է գրականության պատմության պարբերացման հարցերը, ժանրային համակարգը, գրական ուղղությունները, դպրոցները, ցույց է տրվում գրականության պատմության զարգացման ընթացքը: Գիտնականները տպագրվում են ՄԳՇ ամսագրերում, իրականացնում բազային ծրագրով նախատեսված հետազոտությունները: Հրատարակության են պատրաստվում հայ դասականներ Ե. Չարենցի, Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Ն. Աղբալյանի երկերի գիտական ժողովածուները՝ ճշգրտված բնագրերը տեքստերով, բնագրային տարբերություններով, տարբերակներով և գիտական ծանոթագրություններով:
Հաշվի առնելով մշտադիտարկման շրջանակներում ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից ներկայացված տեղեկատվությունը և հիմք ընդունելով փորձագետների կողմից տրված եզրակացությունները, պարզ է դառնում, որ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները ընդհանուր առմամբ համապատասխանում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի

հետ 29.01.2024 թ. կնքված N 1-33/24-I/INSTLIT պայմանագրով նախատեսված պահանջներին:

Կարելի է մշակել ռազմավարություն ինստիտուտի աշխատակազմը երիտասարդ աշխատակիցներով համալրելու նպատակով:

Փորձագետի գնահատմամբ գիտելիքի տարածման ժամանակակից գործիքների միջոցով ճիշտ հանրայնացման արդյունքում ինստիտուտի նորություններն ու միջոցառումներն ավելի հասանելի կլինեն, ներգրավվածությունն ու միջոցառումների մասնակցությունը կընդլայնվի:

Մշտադիտարկման արդյունքում ծրագրի իրականացման շրջանակներում թերություններ չեն հատնաբերվել:

Հավելված 2

«Լևոն Շանթի պատմական դրամաները և 19-րդ դարի 70-90-ական թվականների եվրոպական դրամատուրգիան» (ծածկագիր՝ 22YR-6B039)

<u>Մշտադիտարկումն իրականացրած աշխատանքային խումբ</u> (ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 10.05.2024 թ. N 146-Ա/Ք հրաման)	1.Ղարիբյան Կարեն - Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար 2.Գրիգորյան Արմինե - Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Ծրագրերի իրականացման վարչության Հետազոտական ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ 3.Կարապետյան Լարիսա - Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ 4.Սուքիասյան Համո - ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող 5.Խաչատրյան Շուշան - Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրողների փաստագրման և ուսումնասիրության բաժնի ղեկավար

<u>Մշտադիտարկումն իրականացվել է ըստ հետևյալ փաստաթղթերի/նյութերի.</u>

1. ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ 05.10.2024 թ. կնքված N 1-33/22YR-6B039 պայմանագիր,
2. ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից տրամադրված տեղեկատվություն
3. Այցելություն կազմակերպություն

Հրատարակած գիտական աշխատանքներ (քանակական և որակական)

Պատրաստվել է մեկ հոդված, որ ուղարկվել է տպագրության: Եվս երկու հոդված պատրաստման ընթացքի մեջ են:
Ուսումնասիրվել է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ դրամատուրգիայի զարգացման ընթացքը՝ Մուրացանի, Շիրվանզադեի, Գ. Սունդուկյանի, Վ. Փափազյանի, Ս. Թառայանի, Ս. Մալխասյանի, Ա. Աբելյանի, Մ. Մանվելյանի և ուրիշների դրամատիկական երկերը, քննվել են դրանց թեմատիկ, գաղափարական և ժանրային առանձնահատկությունները: Այնուհետև ուսումնասիրվել են Լ. Շանթի առաջին շրջանի դրամատիկական երկերը, դրանց մասին եղած գիտական հետազոտությունները, տեսական գրականությունը: Կատարվել է հավաքագրված նյութերի գաղափարական և մեթոդական դասակարգում: Պատրաստվել է 1 հոդված, որը ուղարկվել է տպագրության:
Ուսումնասիրվել և բնագրից թարգմանվել են 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի եվրոպական դրամատուրգիայի և գրական տարբեր ուղղությունների մասին եղած տեսական գրականությունը (Հ.Իբսեն, Ա. Ստրինդբերգ., Մ. Մետերլինկ, Զ. Ֆրոյդ, Տուրիշևա Օ. Ն., **Ханс-Хеиберг, Аверенцев С., Волькенштейн В., Выготский Л., Зингерман Б., Шкунаева И., Юнг К., Адмони В. Г. և այլք**):
Հավաքագրվել և ի մի են բերվել նյութերը: Խումբը պարբերաբար կատարել է հանդիպումներ և քննարկումներ: Համակարգվել են ուսումնասիրված ողջ նյութերը և այլն:

Գիտաժողովներ, այցելություններ, գիտական միջոցառումներ

Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խմբի անդամները կատարել են քննարկումներ, այցելություն գրադարաններ՝ ՀՀ ազգային գրադարան, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարաններ, ուսումնասիրել են տարբեր նյութեր, աղբյուրներ, բնագրեր, ինչպես նաև էլեկտրոնային ռեսուրսներ:
Հանրային ռադիոյում պատրաստել են երկու հաղորդում ուսումնասիրության թեմայի շրջանակում: Խմբի անդամները մասնակցել էին մեկ տեղական գիտաժողովի՝«Երիտասարդ գրականագետների հանրապետական գիտաժողով» (Երևան, 2023 թ., նոյեմբերի 15, 16):

Համագործակցություն (այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն)

Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խմբի անդամները պարբերաբար հանդիպումներ են ունեցել ոլորտի մասնագետների հետ, եղել են քննարկումներ: Առկա է ակտիվ համագործակցություն ՀՀ Գրականության և արվեստի թանգարանի ու նրա մասնաճյուղերի, գրողների անունը կրող թանգարանների ու տուն-թանգարանների, Ազգային արխիվի հետ:

Նյութատեխնիկական բազա (սարքեր/սարքավորումներ, գույք)

ՆՈԹԲՈՒՔ ACER Aspire 3 A315-59G-50G5 (i5-1235U) 15.6" 8GB 512GB MX550-2GB (SILVER) (NX.K6WER.003) - 1հատ, 327.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Ֆինանսական

Ներկայացված ֆինանսական ծախսերը հաստատող փաստաթղթերը համապատասխանում են նախահաշվին, թերություններ չեն հայտնաբերվել (կցվում է ԲԿԳԿ Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետի եզրակացությունը):

Ամփոփում (մշտադիտարկման արդյունքներ) և առաջարկություն

Հաշվի առնելով մշտադիտարկման շրջանակներում ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից ներկայացված տեղեկատվությունը և հիմք ընդունելով փորձագետների կողմից տրված եզրակացությունները, պարզ է դառնում, որ 22YR-6B039 ծածկագրով «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2022» մրցույթի շրջանակում ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում իրականացված աշխատանքները ընդհանուր առմամբ համապատասխանում են 05.10.2024 թ. կնքված N 1-33/22YR-6B039 պայմանագրով նախատեսված պահանջներին:
Փորձագետների գնահատմամբ կարելի է սերտացնել հումանիտար հետազոտություններով զբաղվող եվրոպական համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների հետ համագործակցությունը:Կարելի է հայ գրականության թեմաները արտահանել միջազգային տիրույթ, արդյունքները ներկայացնել ավելի լայն լսարանի համար՝ կազմակերպելով միջազգային գիտաժողովներ, քննարկումներ կամ տպագրելով նյութերը նաև թարգմանված տարբերակներով, որը հնարավորություն կտա տարածել ստացված գիտական արդյունքները և բարելավել նրանց հասանելիությունը միջազգային հանրության շրջանակում:
Մշտադիտարկման արդյունքում ծրագրի իրականացման շրջանակներում թերություններ չեն հատնաբերվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC
OF ARMENIA
INSTITUTE OF LITERATURE
AFTER M.ABEGHIAN

Ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փող., 15 , 0015
հեռ. և հեռատիպ 56 32 54
e-mail litinst@sci. am 2477 №161 25.11.2024թ

15, GRIGOR LUSAVORICH, 0015, Yerevan,
Tel. /fax 56 32 54
e-mail litinst @ sci. am

ՀՀ ԿԳՄՄՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՅՈՅՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հայոյան,

Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից անցկացված (հրաման՝ N: 141-Ա 03.05.2024թ.) գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման արդյունքում Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտին ներկայացված եզրակացության, նաև առաջարկությունների համար, որոնք վերաբերում են ինստիտուտի անձնակազմը երիտասարդ աշխատակիցներով համալրելուն և ինստիտուտի նորությունները, ձեռքբերումներն ու միջոցառումները ժամանակակից գործիքներով առավել արդյունավետ հանրայնացնելուն:

Երկու խնդիրներն էլ մեր ուշադրության կենտրոնում են: Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին անցկացրել ենք գրքի շնորհանդես, 4 գիտաժողով՝ յուրաքանչյուրը եռօրյա մի քանի նիստերով, և արդեն իսկ կարողացել ենք հանրայնացման համար օգտագործել հնարավոր բոլոր հարթակները՝ կայք, ֆեյսբուքյան էջ, մամուլ, հեռուստատեսություն: Անշուշտ, կայքի հետ կապված դեռևս շատ են անելիքները և համապատասխան մասնագետ ունենալու պարագայում կայքի նպատակային և լիարժեք վարումը կլինի առավել արդյունավետ:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՄՈՒՏՔ № 83343
«25» 11 2024 թ.

Երիտասարդներին դեպի ինստիտուտ ուղղորդելու համար սերտացրել ենք համագործակցությունը բուհերի հետ: Կատարում ենք աշխատանքներ մի քանի ուղղությամբ. մեծ ուշադրություն ենք դարձնում, որ ինստիտուտում կազմակերպվող պրակտիկաներն իրականացվեն բարձր մակարդակով, երիտասարդներին ներգրավում ենք ինստիտուտի միջոցառումներում, թեմատիկ-հետազոտական ծրագրերում, ասպիրանտների, հայցորդների գրախոսված հոդվածները տպագրում ենք ինստիտուտի «Գրականագիտական հանդես»-ում: Յուրաքանչյուր տարի կազմակերպում ենք երիտասարդ գրականագետների գիտագործնական կոնֆերանս (այս տարի անցկացվելու է դեկտեմբերի 15-20 միջակայքում), որը նպատակ ունի հնարավորություն ընձեռելու երիտասարդ հետազոտողներին ներկայացնելու ուսումնասիրություններ, քննարկելու գրականագիտության արդիական խնդիրներ և նպաստելու երիտասարդ հետազոտողների համագործակցությանը:

Ինստիտուտը աշխատանքներ է կատարում՝ սերտացնելու միջազգային կապերը գիտաժողովներ անցկացնելու, համատեղ հետազոտություններ կատարելու միջոցով, նաև ընդլայնելու հայ գրականության ճանաչելիության սահմանները:

Տնօրեն՝ Հ. Որսկանյան